



« ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏՆԱԵՐ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ » ԳՈՒԿ ԺԸ 16.

ՀԱՏՈՐ ԺԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 1, 1882

ԹԻՒ 3



ԳՈՒԿԱՆԻ ԲԱՐՄԻՔ

ՊՈՐՊԱՅԻ ԲԱՐՍԻՔ

1880 տարւոյն փետրուարի Ա. ետաւ բերին մէջ խօսեցանք համառօտիւ թէ Բարսիք ինչպէս կը թաղեն իրենց մեռելոց մարմինները, և գրինք «Լուսթեան մեհենին» պատկերը: Հոս կը գնենք խումբ մը Բարսիներու պատկեր:

Բարսիք կը սերին հին կրակապաշտ Պարսիկներէն որ իբր հազար տարի առաջ փախչելով իրենց երկրէն, երբ Արաբացիք տիրեցին այն երկրին, և կան Հնդկաստան, սիրով ընդունուեցան Հնդկաստանցիներէն, և են մինչև ցայսօր Հնդկաստանի բնակչաց ամենէն հանդարտ, պատուաւոր և աշխատասէր մասը: Պոմպայի Բարսիներուն գործն է մանաւանդ վաճառականութիւն, և կան անոնց մէջ շատ հարուստ մարդիկ: Բարսիներուն հանդերձներուն մէջ կայ ինչ ինչ նորանշան: Իրենց գլխարկին ձևը հարիւր տարին միանգամ հազիւ կը փոխեն:

Գրեթէ ամէնքը կը կապեն իրենց մէջքը կրկին մետաքսեայ գօտի, զոր աղօթքի ատեն կը թուլցնեն: Բարսի մը պարտական չէ պահել պայման կամ խոստում մը, զոր երբ յանձն առաւ գօտին վրան չէր. բայց պատուաւոր Բարսի մը յանձն չառնուր երբէք գործի մը համար խոստում կամ պայման դնել, եթէ մետաքսեայ գօտին չունի մէջքը:

Բարսիներուն նուիրական կամ սուրբ համարուած օրերը շատ քիչ են: Մին և գլխաւորն է տօնն ի պատիւ իրենց աղանդապետին Չրադաշտի, որ կ'ապրէր Եբրայեցոց մարգարէին Գանիելի ժամանակ: Ուրիշ նուիրական օր է անոնց նոր տարին, երբ Բարսիք այցելութեան կ'երթան իրարու և ընծաներ կու տան, ինչպէս սովորութիւն է շատ Քրիստոնեայ երկիրներ: Անոնց մեհեններուն մէջ կան Բազիններ որոց վրայ կը վառի միշտ նուիրական հուրը զոր իրենց հետ բերած են անոնց հայրերը, երբ փախան Պարսկաստանէ: Բարսիք կը հաւատան թէ այն կրակը կը վառի անդադար Չրադաշտի ժամանակէն, և պիտի վառի մինչև յաղթէ խալառ «բարին» «չար ողորդն»:

Բարսիք շատ մարդասէր և ողորմած են առ աղքատս և տառապեալս: Պնդով յարեալ են իրենց կրօնքին, և շատ քիչերն ընդունած են Քրիստոնէութիւնը:

ԱՂՔԱՏԱՅ ՋՐՀՈՐԸ

Ազորեան կղզեայ մին է Ֆայալ կղզին որ նշանաւոր է իւր նարնջենիներով և բազմազան ծաղիկներովը: Այն կղզին է պտղաւէտ և ծաղկաւէտ, սակայն հոն բնակողները մեծ նեղութիւն կը կրեն զով և մաքուր ջուրի կողմանէ: Հոն չկան աղբիւրներ և ջրհորեր: Ինչպէս կան թուրքիոյ մէջ, ուստի և այն տեղի մարդիկ կը գործածեն անձրևի ջուր զոր կը պահեն մեծ գուբերու մէջ:

Աղբարի այն կղզոյն մէջ կան քանի մը ջրհորեր, բայց անոնց ջուրերն ամէն քսան և չորս ժամու մէջ երկու անգամ կը բարձրանան և կ'իջնեն ինչպէս հոն կ'ընեն ծովու ջուրերը: Ծատ տարիներ առաջ հոն ջրհոր և ջրամբար ալ չկար, և մարդիկ ստիպուած էին ժայռերուն մէջ գտնուած խորշերուն մէջ փնտռել ջուր: Հետեալ պատմութենէն կ'ընաք հասկընալ թէ այն կղզոյն մէջ առաջին ջրհորն ինչպէս շինուեցաւ:

1699 երրորդ տարին էր մեծ երաշտութեան տարի, այսինքն այն տարւոյ մէջ գրեթէ անձրև չեկաւ: Այն տարի յորեն չբուսաւ, կովերն և ոչ խարները, նաև աղքատներէն շատեր մեռան ծարաւէ: Անտան կղզոյն մէջ կար շատ հարուստ մարդ մը, որ տարիներ առաջ օտար երկրէ եկած էր հոն բնակելու:

Այն մարդն էր շատ հարուստ և կրնար շատ բարիք ընել իւր գրամով, սակայն այնպէս կ'ծի և այնպէս խիստ էր որ ժողովուրդը բնաւ չէր սիրեր զնա: Յիշեալ տարի այն մարդուն ոսկւով և արծաթով լի պարկերը չէին կրնար ջուր հայթայթել անոր, ուստի մարդն սկսաւ սապէս խորհիլ. «Հոս ալ ջրհոր մը փորել կուտամ, ինչպէս մեր երկրին մէջ մարդիկ կ'ընեն: Զրհուր փորել կուտամ իմ հողիս մէջ, և թոյլ չեմ տար որ բաց ինչ մէկը կաթիլ մը ջուր առնու անկէ»:

Այսպէս խորհելով սկսաւ մարդ վարձել և գետինը փորել տալ, սակայն գործաւորաց շատ քիչ վարձ կուտար, և շատ խիստ կը վարուէր անոնց հետ: Գործաւորք փորեցին և փորեցին գետինը, բայց ջուր չելաւ: Վերջապէս գործաւորք չուզեցին այլևս աշխատիլ եթէ հողին տէրը չխոստանար ջուրէն մէկ մաս մը տալ անոնց, և այս պարագային մէջ մարդը խոստացաւ գործաւորաց տալ ջրհորը գործածել ամէն օրուան և գիշերուան կէսը եթէ ջուր ելլէր:

Այս խոստման վրայ մարդիկ աւելի համբերութեամբ շարունակեցին փորել, և առաւօտ մը ըստ Երրոպացոց ժամը վեցին յանկարծ գտան ջուր: Գործաւորք պահանջեցին ցերեկուան առաջին վեց ժամերն իրենք գործածել ջրհորը, և տէրը համարձակեցաւ մերժել անոնց պահանջումը: Արդ, մինչ գործաւորք ջուր կը քաշէին հորէն, տեսան որ ջուրն երթալով կը նուազէր, և կէս օրուան ատեն, այսինքն երբ ջուր քաշելու կարգը հորին տիրոջ եկաւ, բնաւ ջուր չկար:

Հարուստ մարդը շատ բարկացաւ և ըսաւ որ այլևս գործ պիտի չտար անոնց: Սակայն այն երեկոյին, գործաւորք դարձեալ պահանջեցին որ թոյլ տրուի անոնց ջուր քաշել: Հորին տէրը ծաղրելով ըսաւ անոնց. «Չուրը ձեզի՞ համար միայն պիտի գայ, ինձի համար պիտի չգա՞:» Սակայն գործաւորք ջրհորը գացին, և տեսան որ հորը ջրով լեցուած էր: Կէս գիշերուան ատեն երբ ջուր քաշելու կարգը հորին տիրոջը եկաւ, մարդն այս անգամ ևս պարագ պտաւ հորը: Ասոր վրայ հարուստ մարդը խորհելով թէ աստուածային զօրութիւն մը չէր թաղուր որ ջուրը բարձրանայ երբ ջուր քաշելու կարգը իրեն գայ, ահով լեցուեցաւ, և եկեղեցի երթալով Աստուծոյ առջև ուխտ ըրաւ, որ եթէ հետեալ առաւօտ դարձեալ ջուր գար, հորը յաւիտեանս պիտի նուիրէր աղքատաց:

Առաւօտուն երբ մարդիկ ջրհորը գացին, տեսան որ հորը ջրով լեցուած էր: Հորին տէրը պահեց իւր ուխտն, և այսպէս հորն եղաւ «Աղքատաց հոր» Մինչև ցայսօր այն հորին մէջ ջուրը քսանեչորս ժամու մէջ երկու անգամ կը բարձրանայ և կը ցածնայ:

ՍՈՒՐԻ ԿՈՒՀԱՐՏԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Քանի մը ամիս յառաջ գրինք Աւետարեբի մէջ այն մեքենային պատկերը, որով բացուեցաւ Սուրբ Կոթհարա կոչուած լեռան գետնափոր ճամբան երկաթուղոյ համար: Այս անգամուան պատկերը կը ցուցնէ երկաթուղոյ կառուումը մը որ այն գետնափորին հարաւային բերնէն կը մտնէ ներս: Այս երկաթուղին արդէն շինուած և պատրաստ է, և երկաթուղոյն կառուութիւնը կ'երթեկեկն ի մէջ Իտալիոյ և հիւսիսային Զուիցերայի:

Գետնափոր ճամբայ շինելու մէջ մեծ յառաջադիմութիւն եղած է, և դիւրութեան ուրիշ միջոցներ կը մտածուին:

Առաջին մեծ և կարևոր գեանափոր ճամբան այն էր որ կանխաւ շինուեցաւ Լոնտոն Գամիս գետին տակ: Մոն Սէնի կոչուած լեռան գեանափոր ճամբան որ երկաթուղոյ համար բացուեցաւ ի մէջ Գաղիոյ և Զուիցէրայի, քանի մը տարի առաջ աւարտեցաւ, և 7 1/2 մղոն երկայն է. բայց Սուրբ կոթհարտի գեանափորը քան զայն երկու մղոն աւելի երկայն է, և աւելի քիչ ժամանակի մէջ բացուեցաւ:

Հիմա գեանափոր ճամբայ մը կը բացուի Նիւ Եորք քաղաքը Հուտտոն գետին տակ, և իբր քան մղոն երկայն գեանափոր ճամբայ մը բանալ առաւ.

մահուամբ տուժէ այս յոնցանքը, ուստի կը խնդրեմ, ով թագաւոր, հրաման տուր սպաննել զնա գազանամարտի մէջ սուխուճներու հետ:”


«Բարկութեան ատեն վճիռ չտանք», ըսաւ թագաւորը, «քանզի բարկութիւն և արդարութիւն մէկտեղ չեն կրնար քայել: Մեծ ազգի մը թագաւորն ազատ ըլլալու է ի կրից, վստահ չի պատկեր և հրեշտակ Ամենակալի է, որուն հաշիւ պիտի տայ:”

«Ո՛չ ապաքէն նոյն իսկ Աստուած», ըսաւ թագուհին, «կը խօսի երբեմն բարկութեամբ, երբ կը գոռայ որո՞ւմամբ և փայլակներ արձակելով. միթէ

չէ թագաւորաց: Իմ գիտաւորութիւնս է արդարութիւնը կատարել չարագործին մահուամբ, մահուան վճիռը արդէն ծանուցուած է անոր, և կատարուելու է անաչառապէս:”

«Թող այսպէս ըլլայ», ըսաւ թագաւորը. «վաղիւ կատարել կու տամ վճիռն ըստ օրինաց, և ժողովուրդը թող խրատուի այս օրինակէն և յիշէ միշտ անսնուաց:”

Յաջորդ օրը երբ չարագործին սպանման ժամն հասաւ, և ազգարարութեան փողերուն և տաւիղներուն ձայնը սկսաւ հնչել, թագուհին իւր բարեկամներով և սպասաւորներով եկաւ պատժոյն



շարկուած է Տուրի նեղցին տակ, այնպէս որ երկաթուղոյ կառքեր կարող ըլլան Լոնտոնէ երթալ շիտակ Բարիզ:

ՅԱՆՅԱՒՈՐՆԵՐ ՊԱՏՃԵԼՈՒ ԼԱՒԱԳՈՅՆ ԿԵՐՊ

Արեւելեան ազգաց մէջ կը պատմուի սա վէպը: Թագուհի մը օր մը առաւօտուն կանուխ բարկութեամբ եկաւ իւր ամուսնոյն, թագաւորին, և կը խնդրէր պատժել չարագործ մը որ նախատած էր ղթագուհին: «Տես», կը գոչէր թագուհին, «խաբեբան բերաւ ինձի սա ազամանդները որ կեղծ են: Ի պատիժ այս խաբէութեան բանտարկել առի մարդը, բայց պէտք է որ

ՍՈՒՐԲ ԿՈՅՆՆԵՐ ԵՐԱՅՈՒԳԻՆ

և մեք, մարդիկ, նմանելու չե՞նք երբեմն անոր:”

«Ո՛չ այսպէս», ըսաւ թագաւորը. «Աստուած բարիք կ'ընէ նոյն իսկ որոտմամբ. անձրեք և փայլատակունք կը մաքրեն օդը և կը զովացունեն զերկիր: Բաբէ, սիրելիս, մարդիկ սովոր են նկարագրել զԱստուած իրենց կարծեաց և կամաց համեմատ, և իրենց անիրաւութիւնը կը ջանան արդարացունել սխալ մեկնելով Արարչին գործը:”

Թագուհին տակաւին լի բարկութեամբ և վրէժխնդրութեամբ ըսաւ թագաւորին. «Գիտեմ որ Աստուած կ'ատէ և կը պատժէ չարագործը, և իշխանութիւն պարապ տեղը տուած

տեղը մեծ գոհութեամբ և ուրախութեամբ, քանզի վրէժխնդրութիւնն իբրև զովացուցիչ ըմպելի ախորժելի է ասելութեամբ ծարաւեալ որտին:”

Հանդիսատեսաց բազմութիւնը ժողովուած էր: Պահապանը բացաւ առիժներու գառազդին դուռը, և թշուառ դատապարտեալը կը կենար գողալով կրկիսին մէջ սպասելով պատառ պատառ յօշոտուելու ահագին գազանին ճիրաններէն: Բայց երբ վերջին փողն հնչեց, գառազդէն դուռը ելաւ ոչ թէ ահագին առիժ, այլ սպիտակ, սիրուն, անմեղ գառնուկ մը, և հանդարտութեամբ իբրև ընտանուոյ մօտեցաւ յանցաւորին որ կը կենար հոն սրտաբախ սրտաթունդ: Իսկ և իսկ լուց փողերուն և թմբուկներուն ձայնը, և վո-

խանակ այն խառնազոչ ձայնին, լըսուեցաւ սրինգներու և քնարներու քաղցր նուագ, և գառնուկը փարելով սարսափեալ մարդուն ծնկուղններուն, մեղմ բառաջերով կը նայէր անոր երեսն ի վեր:

Թագուհւոյն յանդիմանութիւն մ'էր այս անոր բարկացոտ և վրէժխրն դիր ոգւոյն համար, ուստի և թագուհին սկսաւ ամօթէն կարմիր, բայց թագաւորն ըսաւ անոր. « Գու դէմքդ, սիրեցեալդ իմ, կը ցուցնէ թէ իրաւամբ և արդարութեամբ գործածեցի իշխանութիւնս: Մարդը որ գրեզ խաբեց, ինք ևս խաբուեցաւ, և այս դասը պիտի չմոռնայ, և դուն ոչ թէ չար, այլ բարի կերպով առիր վրէժդ: Դէմքիդ գոյնն այժմ աւելի գեղեցիկ է քան արքայական ծիրանին զոր հազած ես, և լիուրի կը վարձատրէ դիս, քանզի անխար վիպ է թէ ըրի ինչ որ արդար էր: Եւ Ամենակալն աւելի կը հաճի գթութենէ քան դատաստանէ: »

Ասոր վրայ փոյրն և թմբուկներն սկսան հնչեցընել ուրախութեան եղանակ մը, և ժողովուրդն ի նշան հաւանութեան սկսաւ աղաղակել ի սրտէ. « Շատ ապրին մեր ողորմած թագաւորն և թագուհին: »

ՏԻՏՈՍԻ ԿԱՄԱՐԸ

Հնութեան այս երևելի մնացորդը կը գտնուի Հռոմ: Այս կամարը շինուած է ի յիշատակ առման Երուսաղեմի Հռոմայեցիներէն յամի ՏՆ. 70: Ի սկզբան պատերազմին վեհապատիանոս էր հրամանատար Հռոմէական զորաց, բայց կայսր ընտրուելով զօրքէն գնաց Հռոմ, իւր որդւոյն Տիտոսի թողով զօրաց հրամանատարութիւնը: Երուսաղեմի առնուելէն և Հրէից ցրուելէն ետքը Տիտոս դարձաւ Հռոմ, ուր ըստ սովորութեան այն ժամանակին եղաւ հանգէս յաղթանակի ի պատիւ վեհապատիանոս և Տիտոսի: Տիտոսի կամարը շինուեցաւ Յունաստանէ բերուած մարմարիտնէ: Կամարին ներքին կողմն է Հռոմ կատարուած յաղթական թափորին պատկերը, ուր կը տեսնուի Երուսաղեմէ առնուած կողոպտուող: Կողոպտուած բաներուն մէջ

որ այս պատկերին մէջ ցուցուած են, բան մը մանաւանդ նշանաւոր է, մանաւանդ Քրիստոնէից համար, այն է տաճարին «Ոսկեղէն աշտանակը», որ պահուած էր Հռոմ մինչև այս քաղաքին յաւարի առնուելը Գոթացիներէն. այն ժամանակ անհետ եղաւ այս երևելի մնացորդը:

Ոմանք կը կարծեն թէ աշտանակը

առաջնոյն, և այս երկրորդ անգամ շինուածն է զոր Հռոմայեցիք տարին Հռոմ:

ՀՐԱՄԱՆԻ ՀՆԱԶԱՆԻՒՂ

Բրուսիոյ թագաւորը Փրեստերիկոս Բ. սովոր էր առաւօտուն կանուխ ելլել, և իւր սպասարարաց սաստիկ հըրաման ըրած էր թոյլ չտալ իրեն քնանալ առաւօտեան ժամը չորսէն աւելի ուշ, այլ արթնցնել զինքը, թէ և ինք չյոթաբեր ելլել: Առաւօտ մը որոշեալ ժամուն սենեկապանն որոյ կարգն էր այն օրը պահպանութիւն ընել, և որ շատ տարիներէ հետէ թագաւորին ծառայութեան մէջ էր, թագաւորին անկողնոյն մօտենալով արթնցուց զնա: Թագաւորն ըսաւ, « Թող որ քիչ մ'ալ քնանամ, դեռ շատ խոնջած եմ: »


« Բայց, տէր արքայ, » ըսաւ սենեկապանը, « Գուք խստիւ պատուիրած էք մեզ առաւօտուն կանուխ արթնցընել Ձեր վեհափառութիւնը: » « Մտկայն, » ըսաւ թագաւորը, « Թող որ քառորդ մ'ալ քնանամ: » « Եւ ոչ իսկ վայրկեան մը թող կու տամ, » ըսաւ սենեկապանը. « ժամը չորսը զարկաւ, և հրաման ընդունած եմ այս ժամուս ստիպել Ձեր վեհափառութիւնն անկողնէն ելլելու: »

« Վա, » ըսաւ թագաւորը, « դու քաջ և հաւատարիմ ես, և թէ թող ապիր ինձ քնանալ, քու զանցառութեանդ համար յանդիմանութեան և պատժոյ արժանի պիտի ըլլայիր: »



ՏԻՏՈՍԻ ԿԱՄԱՐԸ

նետուեցաւ Տիբեր գետը, մինչ ըստ այլոց Գոթացիք տարին զայն Ափրիկէ: Կամարին քանդակն այնպէս մանր է որ աշտանակն հազիւ կը տեսնուի, ուստի մենք ստուարացունելով կը դը-



ՈՍԿԵՂԷՆ ԱՇՏԱՆԱԿԸ

նենք հոս անոր պատկերը: Աշտանակին պատկերը շատ նման է բուն աշտանակին որ ձուլեցաւ Մոսիսի հրամանաւ և դրուեցաւ վիպութեան խորանը, և թէպէտ կորուսեցաւ Հրէից գերութեան ատենը և տարուեցաւ Բաբելոն, սակայն յետոյ Տաճարին երկրորդ շինութեան ատենը, հաւանականապէս նորէն շինուեցաւ նման

ԱՒԵՏԱԲԵՐՆԵՐՈՒ ԳԻՆՆԵՐԸ
ԱՄՍԱԿԱՆ (Հոյերէն բրէ, և Հյ. Տաճիկէն և Պոլիարիէն), փոսթայի ժախքով, տարին 1/4 մէճիսիլէ:

Ամերիկայի Մեխիկոսարաց ընկերութեան կողմէն Խմբագիր ձ. Ք. ԿԻԻՆ Ֆիլաճիքից Եօզուլու, Ամերիգան Իան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԹՅՈՒՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՊՈՐ ՊՅԵԱՆԵԱՆ